Ֆրանկ Բրեննան
Թարգմ.՝ Վիկա Մարկոսյան, Նելլի Հարությունյան

«Հատուկ մրգային տորթ»

Ես երբեք չէի մտածի, որ պատահմամբ այսպիսի ապշեցուցիչ բան կհայտնաբերեմ: Երբ այդ դեպքը պատահեց, ես քիմիկոս էի աշխատում ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահանգում՝ Amos Cosmetics օծանելիքի գործարանում, և փորձում էի նոր օծանելիք ստեղծել:
Ես ինչպես միշտ փորձում էի ծաղիկների, բույրերի բոլոր խառնուրդները, և որոշեցի մորս, իմ նախաճաշի համար դրված, մրգային տորթից մի կտոր գցել ստեղծվող օծանելիքի խառնուրդի մեջ:
Ես չգիտեմ, թե ինչու որոշեցի այդպես անել… Պարազապես արեցի:
Ես այն խառնեցի բոլոր մյուս բաղադրիչների հետ:
Քիչ հետո այդ խառնուրդից ստացվեց փոքր շշով մի օծանելիք: Փորձելու համար դրանից մի քիչ դաստակիս քսեցի: Ինձ թվաց որ լավ է բուրում, բայց ոչ մի առանձնահատուկ բան չկար, այսպիսով ես այն դրեցի պայուսակիս մեջ: Չէի կարող այն, որպես նորույթ ներկայացնել իմ տնօրենին: Ի վերջո ես քիմիկոս եմ և իմ աշխատանքը ինչպես հարկն է օծանելիք ստեղծելն է: Իսկ եթե ես նրան ասեի, թե ինչպես եմ ստեղծել այդ օծանելիքը, նա պարզապես ինձ խորհուրդ կտար հիմար չլինել: Հետո, հավանաբար, այդ պատմությունը որպես զվարճալի դեպք գոլֆի ակումբում կպատմեր իր ընկերներին:
Ահա այսպիսի մարդ էր իմ տնօրենը:
-Աննա,- իմ տնօրենն էր Դեյվիդ Էյմոսը, Amos Cosmetics ընկերության տնօրենը: Նա պատահմամբ անցնում էր այնտեղով, որտեղ ես աշխատում էի: Նա սովորաբար իմ դիրքի հասարակ աշխատողների հետ չէր զրուցում: Ուրեմն՝ ի՞նչ էր ուզում նա: Նյարդայնացա:
-Այո, միստր Էյմոս,- ասացի ես:
- Այսօր դու ցնցող տեսք ունես, Աննա: Այդ ինչ հաճելի բուրմունք է: Կարծես՝ թարմ հացի, ծաղիկների ու արևի շողերի խառնուրդ լինի… Չգիտեմ… Քո՞ օծանելիքն է:
Ես չհասկացա, թե նա ինչի մասին էր խոսում: Ես ոչ մի հատուկ բուրմունք չէի զգում, մինչդեռ միստր Էյմոսը օծանելիքների հարցում փորձառու հոտառություն ուներ:
-Այո, քո օծանելիքն է,- ասաց նա բարձրաձայն: Կողքիս գտնվող բոլոր աշխատողները լսեցին: Շփոթեցնող էր:
Նախկինում ես երբեք չէի լսել, որ իմ կամ ուրիշ մի աշխատողի հետ իմ տնօրենը այդպես խոսեր: Դեյվիդ Էյմոսը թուխ մաշկով, գեղեցիկ անգլիացի տղա էր, ով երբեք չէր էլ մտածի իմ պես հասարակ աղջիկներին հաճոյախոսություններ անելու մասին: Նա ավելի շուտ նախընտրում էր լինել գեղեցիկ, երիտասարդ մոդելների հետ, ովքեր գերադասում էին իր արտաքինն ու փողերը: Իսկ աշխատակիցների հետ զրույցի ընթացքում նա սովորաբար դժգոհում էր ինչ-որ բանից: Կարծում եմ՝ այսօր նա ինչ-որ կատարկ է անում:
Հանկարծ նա եկավ ու կողքիս կանգնեց: Նա խոսում էր հանգիստ ձայնով, ուղիղ ականջիս մեջ:

-Գիտե՞ս Աննա, ես իսկապես չէի նկատել… Չգտեմ, թե ինչու, բայց դու իսկապես գեղեցիկ կին ես:
-Միստր Էյմոս…,- ես փորձում էի պատասխանել նրան, բայց չգիտեի ինչ ասել:
-Ոչ, ճիշտ եմ ասում, Աննա, ես ուզում եմ տեսնել քեզ այս ձանձրալի գործարանից դուրս: Կճաշե՞ս ինձ հետ այսօր երեկոյան:
-Լավ, ես…,-ես չափազանց շփոթված էի, որպեսզի ինչպես հարկն է պատասխանեի:
-Հոյակապ է, ուրեմն՝ այսօր ժամը ութին ձեր տան մոտ կսպասեմ քեզ: Դե… մինչ հանդիպում,- ասաց նա:
Ավտոբուսով տուն գնալիս ես մտածում էի ստեղծված տարօրինակ իրավիճակի մասին: Իմ տնօրենը, ով հայտնի է գեղեցիկ կանանց հետ իր հանդիպումներով, հիմա ասում է, որ ես գեղեցիկ եմ և ինչ-որ տեղ է հրավիրում: Չնայած՝ ես գիտեի, որ սովորական, հասարակ տեսք ունեմ և բոլորովին իր ճաշակին չեմ: Երբ ես տուն հասա մայրս հույրասենյակում զրուցում էր իմ մորաքույր Միմիի հետ:

Մորաքույր Միմին: Ես սիրում եմ նրան, իսկ նա սիրում է ուրիշի գործերով զբաղվել: Նա վաղուց ցանկանում է, որ ես ամուսին գտնեմ: Եվ նրան բնավ դուրս չի գալիս, որ ես զբաղվում եմ իմ կարիերայով: Նա կարծում էր, որ նորմալ չէ, որ «իմ պես քսանյոթ տարեկան կինը դեռ ամուսնացած չէ»: Մորաքույր Միմին կարծում էր, որ նա կարող է ինձ համար ամուսին գտնել: Ես արդեն սովոր էի այդ տեսակ խոսակցություններին, բայց բոլոր դեպքերում՝ անհարմար էր:
-Այնքան հաճելի է Ձեզ այստեղ տեսնելը, մորաքույր Միմի:
Մորաքույր Միմին նայեց ինձ և ժպտալով ասաց.
-Աննա, իմ փոքրիկ աղջիկ, բայց տես, որ դու արդեն այն փոքրիկ աղջիկը չես: Դու արդեն քսաներեք տարեկան կին ես: Ինչպե՜ս է թռչում ժամանակը…
- Իրականում ես քսանյոթ տարեկան եմ, մորաքույր,- ասացի ես:
Նա միշտ շփոթում է իմ տարիքը:
- Այդքան շո՞ւտ: Եվ դու դեռ ամուսնացած չես…Մայրդ ամուսնացավ տասնութ տարեկանում և դու ծնվեցիր, երբ նա տասնինը տարեկան էր:
Մորաքույր Միմին տխրեց: Ինչպես միշտ նա որոշել էր ասել այն, ինչ մտածում է:
- Ուրեմն ե՞րբ ես պատրաստվում մի գեղեցիկ տղայի տուն բերել,- ասաց նա ուղիղ աչքերիս մեջ նայելով:
- Մի տղա կար, Արմսթրոնգը, երկու տարի առաջ դու հանդիպում էիր նրա հետ: Նա գեղեցիկ էր,- ասաց մայրս, փորձելով օգնել ինձ:
-Մամ, Արմսթրոնգը ընդամենը պիցցայի առաքիչ էր,- փորձեցի բացատրել նրան, բայց նա չլսեց ինձ:
-Արմսթրոնգը մի քանի անգամ մեր տուն է եկել, ես նրան հավանում էի,- ասաց մայրս:
-Մամ,- ասացի,- բայց դա այն ժամանակ էր, երբ մեր ջեռոցը փչացել էր, հիշո՞ւմ ես: Մենք գրեթե մեկ շաբաթ անընդհատ պիցցա պատվիրեցինք, մինչև ջեռոցը սարքվեց: Արմսթրոնգն էլ պարզապես պիցցան էր առաքում:
-Միևնույն է,- ասաց մայրս,- ես հավանում էի նրան, գեղեցիկ աչքեր ուներ:
Մորաքույր Միմիի աչքերը զարմանքից լայնացան:
-Ուզում ես ասել, որ դու թողեցիր, որ այդ տղան հեռանա՞:
-Բայց նա ընդամենը պիցցայի առաքիչ էր,- անտարբերությամբ ասացի ես:
- Դա այն ժամանակ, իսկ հիմա հավանաբար նա այդ ընկերության տնօրենն է,- ասաց մորաքույր Միմին,- և դու թողեցիր, որ նա հեռանա:
Վիճելն անիմաստ էր: Գիտեի, որ ինչ էլ ասեմ, ինձ չեն լսելու: Որոշեցի փոխել թեման:

- Մրգային տորթն էլ լավն էր, մամ:
- Հա, մորաքույր Միմին էր բերել: Բայց թեման փոխելու փոխարեն լսիր մորաքույր Միմիին, նա քեզ բան ունի ասելու:
«Օ՜ ոչ: Նա էլի փորձել է ինձ հարմար ամուսին գտնել»:
Եվ մորաքույր Միմին սկսեց.
- Աննա, ես քեզ համար մի կատարյալ տղա եմ գտել: Ճիշտն ասած՝ նա այդքան էլ երիտասարդ չէ, ինչպես և դու, բայց դեռ ճաղատ էլ չէ:
Ես որոշեցի այս ամենին վերջակետ դնել, որովհետև չէի ուզում հանդիպել մորաքույր Միմիի «տղային», նույնիսկ եթե նա իր սեփական մազերը ունի:
- Շնորհակալ եմ, մորաքույր,- ասացի ես,- բայց ես այսօր երեկոյան հանդիպելու եմ մեկի հետ:
Ես բնավ չէի ուզում նրանց պատմել կատարվածի մասին, պարզապես ասացի դա մորաքույր Միմիին լռեցնելու համար: Դրանից նրանք, իհարկե, անակնկալի եկան: Նրանք ինձ էին նայում ձկների պես բաց աչքերով ու բերաններով:
- Այո,-շարունակեցի ես,- Այսօր հանդիպելու եմ իմ տնօրեն միստր Էյմոսի հետ: Ժամը ութին նա գալու է իմ ետևից:
Դա, անշուշտ, զարմացրեց նրանց:

* * *

Մայրս ու մորաքույր Միմին գոհ էին: Նրանք արդեն հարսանիքի պլաններն էին մշակում, ու ինձ թողել էին պատրաստվելու հանդիպմանը նրա հետ, ով ապագայում կարող էր իմ ամուսինը լինել: Ես փոշմանեցի, որ այդ մասին պատմել եմ նրանց: Ի վերջո ես գաղափար անգամ չունեի, թե ինչու է իմ տնօրենը իրեն այդպես պահում: Առաջ նա նույնիսկ չէր էլ նկատում ինձ: Ու հանկարծ այսօր նկատեց իմ օգտագործած օծանելիքի բույրը: Վերջերս ես օգտագործում եմ «Intrigue» անունով օծանելիք: Այն արտադրված է մեկ այլ օծանելիքի ընկերության կողմից, և ես իսկապես նախընտրում էի այն օծանելիքները, որոնք մեր ընկերության կողմից չեն արտադրված:
Միստր Էյմոսը օծանելիքների նկատմամբ շատ լավ հոտառություն ուներ: Մի գուցե «Intrigue»-ն այնքան լավն էր, որ նա չէր կարողացել զսպել իրեն… Ով գիտի:
Բոլոր դեպքերում, ես պիտի պատրաստվեի երեկոյան հանդիպմանը: Չնայած՝ չէի կարողանում հասկանալ՝ ինչու միստր Էյմոսը հանկարծ որոշեց, որ ես գրավիչ եմ: Եթե ինձ հարցնեն, ապա ես այնքան վատն եմ, որքան կարծում է մորաքույր Միմին: Զավեշտալին այն է, որ միստր Էյմոսի նման տղամարդիկ իսկապես ինձ դուր չէին գալիս, բայց ես ուզում էի պարզել՝ ինչը նրան ստիպեց փոխվել:
Այսպիսով, ես հագա իմ լավագույն սև զգեստը, իմ միակ բարձրակրունկ կոշիկը և շատ «Intrigue» օծանելիք ցանեցի: Պայուսակը, որ ես օգտագործում եմ աշխատանքի գնալիս միակն էր, որ ես ունեի, քանի որ այդքան հաճախ այլ առիթներով դուրս չէի գալիս: Ես վերցրեցի այն ու հանկարծ լսեցի դռան զանգը:
Երբ դռան մոտ հասա մայրս և մորաքույր Միմին արդեն այնտեղ էին: Նրանք ուզում էին տեսնել իմ ընտրությունը: Երկուսով փորձում էին շտապեցնել ինձ: Ժպտում էին: Ես բացեցի դուռը:
- Բարև Աննա:
Միստր Էյմոսն էր: Նա շատ գեղեցիկ տեսք ուներ: Առաջվանից շատ ավելի հանգիստ էր, աչքերը հառել էր հատակին: Մայրս ու մորաքույրս կանգնած էին իմ հետևում: Կարելի է ասել, որ Էյմոսը նրանց դուր եկավ: Անհարմար իրավիճակ էր ստեղծվել:

- Ողջույն, միստր Էյմոս,-ասացի ես: Ակնկալում էի, որ նա ընկերական ինչ-որ բան կասի, ինչպես օրինակ «Ինձ Դեյվիդ ասա» կամ մի ուրիշ բան, բայց չասաց:
Առանց որևէ անհանգստության ես հաջողացրի նրան հեռացնել մայրիկից և մորաքույր Միմիից: Հասկացա՝ նրանք մտածում էին, որ մենք պետք է մենակ մնանք, և հույս ունեին ապագայում լսել մեր հարսանիքի մասին:
Դեյվիդ Էյմոսը համարյա ոչինչ չասաց մեքենայում բացի մի քանի քաղաքավարի հաճոյախոսություններից այն մասին, որ ես գեղեցիկ եմ: Կարող եմ ասել, որ նա բնավ դա ի նկատի չուներ: Տղամարդիկ մի ինչ-որ ձև ունեն ասելու, որ դու գեղեցիկ ես, երբ իրականում նրանց համար միևնույն է, թե ինչպիսին ես դու:
Ինչևէ, նա ինձ տարավ մի թանկ ֆրանսիական ռեստորան, որտեղ մենք ժամանակ անցկացրինք խմիչք ու ուտելիք պատվիրելով: Ամբողջ խոսակցությունը կրում էր քաղաքավարի բնույթ, բայց ես զգում էի, որ նա պատրաստվում է ինչ-որ բան ասել: Հետո նրա դեմքը լուրջ արտահայտություն ստացավ:
-Էսիր Աննա,- սկսեց նա:
Ես գիտեի, նա միտքը փոխել էր և փորձում էր ինչ-որ պատճառաբանություն գտնել այդ երեկոյի համար:
-Այսօր գործարանում… Ես չգիտեմ՝ ինչու այդպես պահեցի ինձ:
- Կարծում եմ՝ այն պատճառով, որ Դուք կարծում եք, թե ես գրավիչ եմ: Եվ որովհետև հավանեցիք իմ օծանելիքը,- ասացի ես, զարմանալով, թե ինչու իմ «Intrigue»-ն ոչ մի ազդեցություն չթողեց նրա վրա:
Բայց ակնհայտ էր, որ նա չէր լսում էր ինձ:
- Էսիր Աննա,-շարունակեց նա,- եթե մենք այս հանդիպումը համարենք որպես… որպես…
- Որպես ի՞նչ միստր Էյմոս:
Նա հանկարծ կեղծ ժպտաց:
-Որպես պարգևատրում գործարանի քո լավ աշխատանքի համար: Ի վերջո դու ամենալավ քիմիկներից մեկն ես: Սա ամենաքիչն է, որ ես կարող եմ անել ցույց տալու համար, թե որքան եմ գնահատում քո ջանքերը: Ճաշը իմ հաշվին է, ես կվճարեմ:

Եթե ճաշը բերած լինեին ես այն կնետեի ուղիղ Էյմոսի վրա: Ուրեմն՝ նա փոխել էր իր կարծիը և ուզում էր ազատվել ինձնից: Ես չէի ուզում հավատալ, որ այս ճաշը լավ քիմիկոս լինելու համար իմ պարգևատրումն է: Ինձ անհրաժեշտ էր մենակ մնալ, որպեսզի մտածեմ, թե ինչ պիտի անեմ:
-Ներեցեք միստր Էյմոս, մեկ րոպե- ասացի ես վեր կենալով:
-Իհարկե,- ասաց նա նայելով ինձ առաջվանից ավելի հանգիստ տեսքով:
Ես գնացի հարդարման սենյակ: Ուզում էի կոտրել կահույքը կամ մեկ այլ բան: Բարկացել էի: Ի վերջո ես հպարտություն ունեի: Եվ ինչո՞ւ իմ «Intrigue»-ն «չաշխատեց»: Մի գուցե քիչ էի օգտագործել նույնիսկ նման փորձառու հոտառություն ունեցողի համար:
Ես որոշեցի էլի օգտագործել դրանից, գուցե դա օգներ…
Ես փնտրեցի իմ պայուսակում, բայց չգտա: Կարողացա գտնել գործարանում պատրաստված այն «մրգային տորթով» օծանելիքի սրվակը: Ինձ համար արդեն միևնույն էր և ես օգտագործեցի այն: Շշի կեսը լցրեցի վրաս այնուհետև դուրս եկա: Երբ ես հետ էի գնում դեպի մեր սեղան ես գրեթե բախվեցի այն մատուցողին, ով սպասարկում էր մեզ: Նա կանգ առավ և հիմար հայացքով ինձ նայեց: Հետո հիշելով իր աշխատանքի մասին շարունակեց քայլել և կպավ մի սեղանի, որի վրա տորթեր

կային: Երբ ես վերջապես սեղանի մոտ հասա միստր Էյմոսը շփոթված էր, կարծես չէր ուզում, որ իրեն տեսնեն ինձ հետ: Ես հասկացա, որ նա փորձում էր թաքցնել դա: Հանկարծ մի տարօրինակ բան տեղի ունեցավ: Նա բացեց բերանը կարծես թե ուզում էր խոսել, բայց հանկարծ լռեց: Նա զգաց իմ մրգային տորթով պատրաստված օծանելիքի հոտը և փոփոխությունը, որը կատարվեց նրա հետ այնհայտ էր: Նրա շփոթված տեսքը հօդս ցնդեց: Նա նման ոսկոր գտած մի շան: Նրա աչքերը փայլում էին և նա այնպես ժպտաց, որ ինձ թվաց, թե նրա դեմքը երկու մասի կբաժանվի: Նա ոտքի կանգնեց:

- Վերջապես դու վերադարձար, ես կարոտել էի քեզ, Աննա: Կարծես՝ ես մի սոսկալի երազի մեջ էի և հենց նոր արթնացա:

- Երա՞զ, միստր Էյմոս,- հարցրեցի ես չհասկանալով, թե ինչի մասին է խոսում:

- Ինձ Դեյվիդ ասա, սիրելիս,-ասաց նա:

«Սիրելի՞ս: Ի՞նչ նկատի ուներ նա: Ի՞նչ է կատարվում»:

-Այո,- շարունակեց նա,- Այդ երազում տեսա, որ ես քեզ վերաբերում էի այնպես, կարծես դու պարզապես իմ աշխատողը լինեիր: Իրականում՝ դու ինձ համար ավելին ես քան սոսկ աշխատողը:

«Հետաքրքիր է, ինչ նկատի ուներ: Արդյո՞ք նա պատրաստվում էր իմ աշխատավարձը բարձրացնել»:

Նա շարունակեց.

- Դու պետք է հասկանաս, որ ես խենթանում եմ քեզ համար, սիրելիս:

Նա նորից ինձ «սիրելիս» անվանեց: Եվ նա լուրջ էր խոսում:

Պետք է ասեմ, որ այս դեպքում ես էի շփոթված: Հինգ րոպե առաջ իմ տնօրենը չէր ուզում, որ իրեն տեսնեին ինձ հետ, իսկ հիմա ասում է, որ խենթանում է ինձ համար: Ի՞նչը կարող է ստիպել նրան այսպես վարվել: Հանկարծ ես ամեն ինչ հասկացա: Դա իմ մրգային օծանելիքն էր: Մի գուցե «Intrigue»-ն շատ լավ էր բուրում, բայց այն կնոջը գրավիչ չէր դարձնում տղամարդու համար, ինչը չէր կարելի ասել իմ մրգային տորթով օծանելիքի մասին:

- Ես զգում եմ, ինչպես է ամեն վայրկյան իմ սիրտը սիրով լցվում, Աննա,- ասաց Էյմոսը նայելով իմ սև զգեստով ծածկված մարմնին:

Այդ պահին մի մատուցողուհի մոտեցավ մեր սեղանին և ասաց, որ ինձ զանգում են ավելացնելով, որ զանգին պատասխանեմ նախասրահում:

Ես մտածում էի, թե ինչ առիթով այն կարող է լինել:

- Կներես, Դեյվիդ, երկար չի տևի,- ասացի ես:

- Մեկ րոպեն էլ երկար ժամանակ է, երբ դու կողքիս չես, Աննա, - ասաց նա:

Նրա խոսքերը նման էին մի վատ ֆիլմում հնչող խոսակցության: Բայց ես չասացի այդ մասին. վերջ ի վերջո նա իմ տնօրենն էր, նույնիսկ, եթե այդ պահին խենթացել էր: Երբ ես նախասրահ հասա, վերցրի հեռախոսը: Նկատեցի, որ ինչ-որ մեկը, այդ ընդարձակ սենյակում ՝ մյուս հեռախոսի մոտից ինձ ձեռքով է անում: Ես նկատեցի, որ դա կրկին այն մատուցողն էր՝ ամբողջ տաբատը տորթի կտորներով կեղտոտված:

Հիմա ի՞նչ էր ուզում ինձանից:

Շուտով պարզեցի:

-Միսս…,- հեռախոսագծի մյուս կողմում նա հուզված էր, - Գիտեմ՝ ես միայն մի խղճուկ մատուցող եմ, բայց սերը ինձ քաջ դարձրեց…

«Այս գիշեր ինչու՞ են բոլորը վատ ֆիլմերի հերոսների նման խոսում»:

-Երբ քիչ առաջ տեսա Ձեզ,- ասաց մատուցողը, - Չկարողացա կառավարել իմ սերը Ձեր նկատմամբ: Դուք շատ գեղեցիկ եք: Խնդրում եմ՝ ասեք ինձ, որ կտեսնվեք ինձ հետ… Գիտեմ՝ ես կարող եմ Ձեզ ավելին տալ, քան այդ հարուստ հիմարը, ում հետ Դուք նստած էիք: Միգուցե ես չունեմ իր փողերը կամ տեսքը, բայց ես սիրում եմ Ձեզ շատ ավելի, քան նա երբևէ կարող է սիրել : Խնդրում եմ, իմը եղեք:
-Սպասիր մի րոպե, Ռոմեո, -ասացի ես, - Ինչու՞ պարզապես չես հանգստանում և մատուցում ծովախեցգետինը՝ մի լավ մատուցողի պես:

Դա օծանելիքն էր, կրկին իմ «Յուրահատուկ մրգային տորթը»: Մատուցողը լավ հոտ էր առել կողքովս անցնելիս, և այժմ կարծում էր, թե սիրահարվել է ինձ… Խեղճ տղա…
Դա նրա մեղքը չէր: Ես նրան ասացի, որ եթե նա անգամ ինձ սիրում է, չբարձրաձայնի այդ մասին:
- Իհարկե, իմ սեր: Ես չեմ ամաչեցնի քեզ… սիրելիս, - ասաց մատուցողը:

Առայժմ մի երեկոյի ընթացքում երկու մարդ ինձ «սիրելիս» անվանեցին: Մորաքույր Միմին գոհ կլիներ:
Բայց եթե օծանելիքը այդպես «աշխատեց», ես ավելի լավ է փորձեմ ուրիշ տղամարդկանց կողքով շատ մոտիկ չանցնել: Վերջում հնարավոր է, որ մի խումբ տղամարդիկ ուղեկցեն ինձ մինչև տուն՝ ասելով, թե սիրում են ինձ: Եվ արդյո՞ք դա սարսափելի չի լինի: Դե… Չի՞ լինի:
Գուցե ոչ, բայց հեշտ չի լինի այդ ամենը մայրիկին բացատրելը: Եվ ես դրա մասին չեմ էլ խոսի մորաքույր Միմիի մոտ:
Բարեբախտաբար, այդ գիշեր տեղը հանգիստ էր: Ես քայլեցի դեպի սեղանը՝ փորձելով հետ պահել ինձ ռեստորանում գտնվող այլ տղամարդկանցից: Ես բախտավոր էի՝ թվում էր, թե նրանք պետք է մոտ լինեին օծանելիքին, որ այն ազդեցություն գործեր:
Երբ ես վերադարձա սեղանի մոտ, ես տեսա, որ Դեյվիդը նստած էր Սաբինայի՝ գեղեցիկ, երիտասարդ մոդելի հետ, ով նրա նախկին ընկերուհին էր. Վերջերս նրանց նկարները բոլոր թերթերում կային:
- Այսպիսով, դու Աննան ես: Նախկինում քեզ չեմ հանդիպել, Աննա:
Սաբինան այնպես ասաց իմ անունը, կարծես դա մի կեղտոտ բառ էր:
-Դու Դեյվիդի մոտ չէի՞ր աշխատում՝ որպես օծանելիք պատրաստող կամ ինչ-որ նման բան: Ահավոր հետաքրքիր է:
Նա իր ձեռքը մեկնեց ինձ, կարծես ես պետք է համբուրեի այն: Ես չարեցի դա:
-Սաբինա, - ասաց Դեյվիդը, - Աննան այն կինն է, ում ես սիրում եմ:
Ես չէի հավատում իմ ականջներին: Դեյվիդ Էյմոսը ասում էր, որ սիրում է ինձ՝ ուղիղ իր գեղեցկուհի ընկերուհու՝ Սաբինայի, քթի տակ: Եվ այս ամենն իմ մրգային տորթի պատճառով է: Ես պետք է ինչ-որ բան ասեի: Սա հիմարության է վերածվում:
-Դեյվիդ, ես իսկապես կարծում եմ…- սկսեցի ես:

Բայց այդ ժամանակ մեր մատուցողը լրիվ կերպարանափոխված հայտնվեց: Նա կիթառ էր նվագում ու ինձ համար երգում էր «O Sole Mio»-ն, որքան հնարավոր է բարձր ձայնով: Նա ասել էր, որ բարձրաձայն չի խոսի այդ մասին, իսկ ես ոչինչ չէի ասել բարձրաձայն երգելու մասին: Մյուս անգամ հաշվի կառնեմ:
Ինչ վերաբերում է Սաբինային, նա չգիտեր՝ ծիծաղեր, թե լաց լիներ այն երկու տղամարդկանց մոտ, ովքեր իր ներկայությամբ միևնույն ժամանակ ասացին, թե ինչքան են սիրում ինձ:
Այսպիսով նա ապտակեց Դեյվիդին:
Մատուցողը երգում էր նույնիսկ ավելի բարձր, քան առաջ: Դեյվիդը հարվածեց նրա կզակին: Երբ ես հեռացա սեղանից, կռիվ սկսվեց Սաբինայի, Դեյվիդի, երգող մատուցողի և մի քանի այլ մատուցողների միջև, ովքեր փորձում էին հանգստացնել այդ երեքին:
Շուտով այդ վայրը վերածվեց տորթի, ծովախեցգետնի կտորների, գինիների լողավազանների և կոտրված կիթառի կտորների շփոթի:
«Գնալու ժամանակն է»,- մտածեցի ես:
Ես վազեցի ցած և տաքսի վարձեցի տուն գնալու համար: Փառք աստծո, տաքսու վարորդը կին էր:

* * *

Երբ տուն հասա, մորաքույր Միմին գնացել էր, իսկ մայրիկը քնած էր: Նա երբեք չի կարողանում արթուն մնալ, երբ հուզված է: Ես մի ժամանակ ունեցա կատարվածը հասկանալու համար: Ինչու՞ իմ օծանելիքը թողեց այդպիսի ազդեցություն այն տղամարդկանց վրա, ովքեր սովորաբար ինձ վրա ուշադրություն չեն դարձնում: Ոչ մի արտասովոր բան չկար դրա բաղադրության մեջ: Ոչինչ, բացի մորաքույր Միմիի մրգային տորթից:
Ի՜նչ մրգային տորթ է:
Հետո ես մի միտք հղացա: Ի՞նչ կլինի, եթե ես՝ որպես քիմիկոս, պարզեմ, թե ինչ կար այդ մրգային տորթի մեջ, որը ստիպեց տղամարդկանց խելագարվել սիրուց: Մարդիկ շատ կվճարեն այդպիսի մի բանի մասին շատ բան իմանալու համար: Ես կարող եմ շատ գումար վաստակել: Անպատճառ, եկեք մտածենք այն մասին, թե ինչու ես պետք է թողնեմ, որ Amos Cosmetics-ը իմանա այդ մասին: Վերջ ի վերջո, դա նրանց մրգային տորթը չէր: Բայց ես ոչինչ չէի կարող անել, մինչև չիմանայի, թե ինչ կար այդ թխվածքի մեջ, որի բաղադրությունը միայն մորաքույր Միմին գիտեր:
Ես որոշեցի հաջորդ օրը բացակայել աշխատանքից: Կասեմ, թե ես մրսել եմ, կամ նման մի բան: Ես նաև ուզում էի փախչել Դեյվիդ Էյմոսից, ով միգուցե դեռ յուրահատուկ մրգային տորթի, կամ դրան հետևած կռվի ազդեցության տակ լիներ:

* * *

Մորաքույր Միմին ապրում էր մի գեղեցիկ, փոքրիկ բնակարանում, քաղաքի մյուս ծայրին: Ես տանից դուրս եկա մինչև մայրիկի վեր կենալը: Չէի ուզում, որ ինձ

հարցուփորձ անեին իմ նոր, երիտասարդ տղամարդու մասին: Այնտեղ հասնելը մեկ ժամ տևեց ավտոբուսով:
Երբ վերջապես ես ժամանեցի, մորաքույր Միմին ինձ ջերմորեն ընդունեց: Շուտով մենք նստեցինք նրա խոհանոցում սկսեցինք խոսել սրանից-նրանից: Մենք երկուսս էլ գիտեինք, թե մորաքույր Միմին ինչ էր հարցնելու վերջում, այսպիսով մեզանից ոչ ոք դեմ չէր սկզբում ուրիշ թեմաներից խոսելուն: Մորաքույր Միմին լավ ընկեր էր, երբ չէր խոսում տղամարդկանցից:
Ես հիշեցրի մրգային տորթի մասին:
-Աննա, -ասաց մորաքույր Միմին, - Ես քեզ ճանաչում եմ ծնվածդ օրվանից, և դու երբեք տորթ չես պատրաստել: Հիմա դու ուզում ես իմանալ՝ ինչպե՞ս պատրաստել մրգային տորթ: Ի՞նչ է կատարվում:
-Ոչինչ, մորաքույր Միմի, ես պարզապես կարծում եմ, որ տորթը համեղ էր և ցանկացա թխել: Վատ բան չկա դրա մեջ, չէ՞:
Իհարկե, ես ստում էի: Երկուսս էլ գիտեինք:
-Այսպիսով,-ասաց մորաքույր Միմին, - Քո այդ նոր տղամարդը, ցանկանում է, որ իր համար տորթ պատրաստես: Նա ի՞նչ է կարծում՝ ո՞վ ես դու, նրա մա՞յրը: Անցած երեկո ի՞նչ էիք անում դուք երկուսդ, խոհարարության դա՞ս էիք անցկացնում:
-Օհ, խնդրում եմ, մորաքույր Միմի, - ես աղաչեցի,- ինձ իսկապես անհրաժեշտ է իմանալ դրա բաղադրությունը: Խոստանում եմ, որ երբ դու ասես ինձ, ես էլ քեզ կպատմեմ ամեն ինչ անցած երեկոյի մասին:
Մորաքույր Միմին հետաքրքրվեց.
-Ամեն ի՞նչ:
-Ամեն ինչ,-ասացի ես, -ոչ մի գաղտնիք:
Մորաքույր Միմին ժպտաց:
-Լավ, սիրելիս, ես չէի ցանկանում քեզ ասել սա, բայց ես չէի պատրաստել տորթը: Ես գնել էի այն:
-Դու գնե՞լ էիր այն,- ասացի ես՝ չկարողանալով թաքցնել զարմանքս,- Որտեղի՞ց էիր գնել:
-Շուկայում մի փոքրիկ, բացօթյա կրպակից, մեկից, ով այգում շաբաթը երկու անգամ է լինում: Մի ծեր կին կար այնտեղ, ով ասաց, որ պատրաստել է դրանք իր ամուսինների համար: Նա յոթն է ունեցել, կհավատա՞ս: Եվ նրանք բոլորը կերել են այդ մրգային տորթերը:
Ես, անշուշտ, չզարմացա, որ նա յոթ ամուսին է ունեցել: Ոչ այդ մրգային տորթերի պատճառով:
-Նա ասա՞ց քեզ, թե ինչ է լցրել մեջը,- ես հույսով հարցրի:
-Միայն, որ նա դրել է «ինչ-որ յուրահատուկ բան», որը նա ինքն է աճեցրել, - ասաց մորաքույր Միմին,- Նա չասաց, թե ինչ է դա: Նա ասաց ինձ, որ նա մի քանի անգամ է թխել այդպիսի տորթեր: Ըստ էության, նա իմացավ, որ ես մտածում էի քեզ ամուսին գտնելու մասին: Ես չգիտեմ, թե ինչպես, բայց նա իմացավ:
Համենայն դեպս այս կինը, ով պատրաստել էր տորթը, ասաց ինձ, որ դա քեզ տամ, և

քո բոլոր խնդիրները կլուծվեն: Ես չէի հավատում նրա ասածներին, բայց ես գնեցի մրգային տորթերը, որովհետև դրանք համեղ էին:
Ես նկատեցի, որ մորաքույր Միմին այնպես էր խոսում այդ ծեր կնոջ մասին, կարծես թե նա այլևս մոտ չէ: Ես վախենում էի ամենավատից: Նա մահացե՞լ էր:
-Մենք կարո՞ղ ենք տեսնել այդ ծեր կնոջը նրան այդ մասին հարցնելու համար,- հարցրի ես:
Մորաքույր Միմին տխուր ինձ նայեց:
- Նա մահացել է անցած շաբաթ: Ես գնացել էի նրա հուղարկավորությանը: Ասում են, թե նա եղել է ավելի քան հարյուր տարեկան: Կային բազմաթիվ օտար մարդիկ այնտեղ, ոչ այստեղից, բոլորը խոսում էին ինչ-որ տարօրինակ ձևով: Նրանք կարծես, թե մտածում էին, որ նա կարևոր էր, չնայած՝ նրան այստեղ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում:
- Բացի քեզնից, մորաքույր Միմի, - ասացի ես:
Մորաքույր Միմին ժպտաց:
-Դե, դու գիտես, թե ինչպես ես չեմ կարողանում զբաղվել իմ գործերով:
Ես գիտեի:
-Հիմա քո հերթն է,- ասաց նա՝ մոտենալով ինձ,:
-Ի՞մ հերթը,- հարցրեցի ես:
-Պատմելու ես ինձ այն ամենի մասին, ինչ կատարվեց անցյալ գիշեր, - ասաց նա:
Եվ այսպիսով ես պատմեցի: Ամեն ինչ, ինչպես որ խոստացել էի: Ես չգիտեմ՝ մորաքույր Միմին հավատաց ինձ, թե ոչ, բայց եթե նույնիսկ չհավատա, նա երբեք դա ցույց չի տա: Վատ, ծեր կին չէ իմ մորաքույր Միմին: Ամենևին ոչ, եթե դու ճանաչում ես նրան:

* * *

Ի վերջո, ես ստիպված էի երկու օր աշխատանքից բացակայել: Ես ասել էի, թե հիվանդ եմ, և այսպիսով ես ինձ լավ չէի զգա, մինչև չիմանայի ճշմարտությունը այդ մրգային տորթի մասին: Ես գիտեի, որ մի փոքր հնարավորություն կար բացահայտելու, թե իրականում ինչ կար դրա բաղադրության մեջ: Ես պետք է գտնեի դա՝ վերցնելով 22ի մեջ թողած մնացորդը: Ես ծախսեցի ավելի շատ, քան հաշվարկել էի անցյալ գիշեր: Բայց ես վստահ չէի, որ ուզում եմ ծեր կնոջ գաղտնիքը ճակատագիրս դարձնել: Միգուցե ճիշտ էր, որ գաղտնիքը թաղվել էր նրա հետ: Մյուս կողմից էլ, գուցե սխալ էր: Մայրիկը գոհ էր թվում իմ այն բացատրությունից, թե իմ ու պարոն Էյմոսի գործերը ուղղակի չեն ստացվում, չնայած նա կարծում էր, որ դա բաց թողնված հնարավորություն էր: Նա ցանկանում էր, որ ես հարուստ ամուսին ունենամ: ----------
-Այնուամենայնիվ, երջանկությունը այն է,- ասում էր նա՝ իր ձայնին տխրության նոտա հաղորդելով:

Երբ ես վերջապես վերադարձա գործարան, իմ սեղանի վրա հաղորդագրություն էր թողնված՝ պետք է տեսնեի պարոն Էյմոսին հնարավորինս շուտ: Դեպի Դեյվիդ Էյմոսի

գրասենյակը քայլելիս, ես ինձ զգում էի ինչպես մի դպրոցական աղջնակ, ով ստիպված է գնալ տնօրենի մոտ: Ես վստահ էի, որ յուրահատուկ մրգային տորթը մինչև հիմա չի «աշխատի», վերջ ի վերջո նա ինձ մի քանի օր չի տեսել: Ես թակեցի նրա դուռը:
Պարոն Էյմոսը նստած էր իր մեծ սեղանի մոտ՝ աչքի տակ մի մեծ կապտուկ: Նրա կողքին նստած ժպտացողը, ով սև ակնոցներ ու գլխարկ էր դրել, Սաբինան էր: Նա ձեռքը դրել էր Սաբինայի ուսին:
-Հուսով եմ՝ արդեն լավ ես, Աննա, - ասաց պարոն Էյմոսը:
-Այո, շնորհակալություն, պարոն Էյմոս,- ասացի ես (կարծեցի, որ նրան Դեյվիդ անվանելը այդ պահին ամենալավ բանը չէր կարող լինել): Ես տեսա, որ Սաբինան ուրախ չէր ինձ տեսնելու համար:
-Հուսով եմ դուք էլ եք լավ, - արագորեն ավելացրի ես:
-Աչքս մի փոքր ցավում է, ձեր մատուցողը ուժեղ է հարվածել, - քմծիծաղով ասաց նա: «Այդպես կարող էր անել նաև Սաբինան»,- մտածեցի ես, հիշելով, թե ինչպես նա հարվածեց Էյմոսին: Բայց ես ոչինչ չասացի:
-Համենայն դեպս,- ասաց պարոն Էյմոսը,- ես կարողացա նրանց հանգստացնել, այնպես որ էլ ոչ մի խնդիր չլինի, և ոստիկանություն չկանչեք: Ձեր մատուցողը մասամբ նույնպես մեղավոր էր, այսպիսով նրանք, իհարկե մեծ գնով, ընդունեցին իմ ափսոսանքը: Համենայն դեպս, Amos Cosmetics-ի անունը չհայտնվեց թերթերում:
-Իսկ որպես ձեր նկատմամբ իմ ունեցած տարօրինակ պահվածքի պատճառ, ես չեմ կարող բացատրել ինչն է ինձ վրա ազդեցություն թողել: Ես նկատի ունեմ՝ ինձ պես տղամարդ… և կին…նկատի ունեմ…,- նա նայեց Սաբինային:
Սաբինան ավարտեց այն նրա խոսքը:
-Նա նկատի ունի, որ իր պես մի հարուստ ու վայելչակազմ տղամարդը չի կարող սիրահարվել Ձեզ նման մեկին, երբ նա ինձ պես գեղեցիկ ընկերուհի ունի: Ճիշտ չէ՞, Դեյվիդ:
- Դու դա շատ լավ բացատրեցիր, սիրելիս, - ասաց նա:
Սաբինան շարունակեց.
-Այսպիսով Դեյվիդը առաջարկում է Ձեզ ընդունել մի փոքրիկ գումար՝ լրացնելու համար բոլոր այն հիասթափությունները, որոնք դուք, միգուցե, ունեցել եք: Եվ հետո՝ Դուք կարող եք վերադառնալ գործարան՝ կրկին օծանելիք պատրաստելու: Ճիշտ չէ՞, Դեյվիդ:
- Անշուշտ, սիրելիս, - ասաց պարոն Էյմոսը՝ մինչ կրկին դեպի ինձ շրջվելը,- դե, Աննա, հուսով եմ՝ դա կօգնի…ը… Կօգնի մի փոքր հստակեցնելու կատարվածը: Կներես, որ եղավ այս...ը…Խառնաշփոթը: Հուսով եմ՝ դա կդասավորի մեր իրար հետ կապված գործերը:
Ես կանգնած հետևում էի, թե ինչպես է Սաբինան ժպտում ձեռքը իր մանյակին դնելիս:
-Լավ, պարոն Դեյվիդ Էյմոս, -ասացի ես,- գուցե Դուք կարողանաք օգտագործել Ձեր հայտնի փորձառու քիթը՝ սա տեսակավորելու համար:

Ինչ-որ բան ցանելու համար ես ձեռքս տարա պայուսակս, և տեսա, թե ինչպես էր Սաբինան ծիծաղում: Ես բռնեցի գտնված առաջին օծանելիքի վերևի մասից, և Սաբինայի հագուստի վրա ցանեցի ամբողջը, ինչ կար շշի մեջ:
-Վերցրու սա և նրան նույնպես, դո՛ւ փոքրիկ, սարսափելի կին,- գոռացի ես:
- Երբ ես նայեցի ձեռքիս, այնտեղ կար «Յուրահատուկ մրգային տորթի» դատարկ սրվակ: Սենյակը սկսեց ամբողջովին բուրել այդ հոտով: Ես դուրս եկա, դուրս գրասենյակից և դուրս իմ կարիերայից Amos Cosmetics-ում, իսկ պարոն Էյմոսը կրկին կորցրեց իր վերահսկողությունը:
Սաբինան, իհարկե, այժմ կվայելի ամբողջ լրացուցիչ ուշադրությունը, որ նա կստանա օտար տղամարդկանցից, ի շնորհիվ յուրահատուկ մրգային տորթի: Չնայած վստահ չեմ, որ Դեյվիդ Էյմոսը կվայելի մրցակցությունը:

* * *

Դա պատահեց որոշ ժամանակ անց, «Intrigue» օծանելիքի գործարանում աշխատանքի տեղավորվելուց անմիջապես հետո: Ես փորձում էի պատրաստել մրգային տորթ (ես նկատի ունեմ՝ դուք երբեք չեք իմանա), երբ մայրիկն ու ես լսեցինք դռան թակոցը:
-Մայրիկ, - ասացի ես,- եթե դա մորաքույր Միմին է՝ իր ուրիշ կատարյալ տղամարդու մասին լուրերով, ասա նրան, որ դա ինձ չի հետաքրքրում:
- Մորաքույր Միմին չէ,սիրելիս, -ասաց մայրիկը:
-Ո՞վ է,- ես հարցրեցի:
-Ես կարծում եմ՝ ավելի լավ է դու ինքդ գաս տեսնես,-մայրիկն ասաց:
Ես գնացի մուտքի դռան մոտ: Դա Արմսթրոնգն էր՝ պիցցա առաքող տղան: Նա իր ձեռքերում բռնել էր մի պիցցայի տուփ, որի վրա մեծ տառերով գրված էր՝ «Արմսթրոնգի դեղձով պիցցաներ»:
Արմսթրոնգը այժմ ղեկավարում էր պիցցայի ընկերությունը:
Նա բացատրեց, որ սիրահարվել է ինձ, երբ առաջին անգամ մեզ պիցցա է առաքել, բայց նա ցանկացել է, մինչ ինձ այդ մասին ասելը, հաջողության հասնել: Նա ասաց, որ ես ոչ պակաս արժանի եմ: Հետո նա ինձ ծաղիկներ տվեց: Ես երբևէ չէի նկատել, բայց Արմսթրոնգը բավականին գեղեցիկ է՝ մի գուցե մի փոքր կարճահասակ է, մի քիչ նիհար, բայց ոչ ոք կատարյալ չէ:
-Մայրիկ, տղային խմելու մի բան բեր, - ասացի ես՝ վայելելով նրա ժպիտը:
Եվ մրգային տորթի բուրմունքը մնաց մեր ետևում՝ դռնից դուրս: